

Թեւեռէն վար երկու ժապաւէնով հաս-
տատուած է , որովհետեւ կոճակի գոր-
ծածուծիւն չունին իրենք ամենեւին .
ճերմակ կաշիէ կօշիկ կը հագնին , որ
վայելուչ է . և գլուխնին ալ երկայն և
նեղ սև ձիու մազէ գլխարկով մը կը
ծածկեն : Սգոյ հագուստը ձևի կողմա-
նէ նոյն է առջինին հետ , միայն թէ
անթափ կտաւէ է . կօշիկներուն տեղ՝
յարգէ տրեխներ կը հագնին , և սովո-
րական գլխարկին տեղ՝ ուռույ ոստերէ
շինուած կիսակոնաձև մեծ վըան մը
կ'անցընեն գլուխնին , որուն ծայրերն
ինչուան ուսերը կ'իջնան : Եւ որովհե-
տեւ կը համարին իրենք թէ սգոյ մէջ
եղող մարդը՝ բոլորովին ընկղմած պի-
տոր ըլլայ տիրութեան մէջ , բան մը
պիտի չտեսնայ և բան մը պիտի չսէ՝
որ միտքը չցրուի , անոր համար երեսնին
ալ կը գոցեն պզտիկ քօղով մը :

Սանայք բայ 'ի տափատէն՝ որ աւելի
նեղ է քան զէրիկ մարդկանցը , ներք-
նակ մը կը հագուին կտաւէ կամ մե-
տաքսէ , որուն գոյնն ըստ հասակի ա-
մաց կը տարբերի . վարդագոյն կամ դեղ-
նագոյն կը հագուին օրիորդները և նոր
կարգուածները , մանուշակագոյն՝ երե-
սուն տարուրնէ վար եղող կանայք , և
սպիտակագոյն՝ տարեց կանայք : Իրենց
պարեգօտնին կապտագոյն լայն կտաւ
մըն է՝ զոր վըանին կը պլլեն , և զոր
գօտուով մը հաստատուն բռնել կու տան :
Ուղորական կարգի կանանց , որ ազատ
համարձակ տնէն դուրս կ'ելլեն , պա-
րեգօտը ինչուան ոտքը չիջնար . բայց
ազնուական կանայք որովհետեւ իրենց
սենեակներէն դուրս տեղ չեն քալեր ,
անոր համար իրենց պարեգօտն աւելի
լայն է և ինչուան գետին կը հասնի :

ՀՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդութիւն Պողիկտտի ի Հոփմ :
(Տես երես 15)

Քանի որ Հռոմ հարստութեամբ չէր ճոխա-
ցած , կանայք իրենց երկանց օրինակին հետեւելով
տաժանելի և աշխատալից կեանք մը կ'անցընէին :
Իրենց բնակարանները փակուած՝ իրենց զբա-
ղանքն էր տղաքնին սնուցանել , բուրգ մանել ,
կամասուի հիւսել որով իրենց ընտանիքը հագուե-
ցընէն : Կամաց կամաց այս պարզութենէն հեռա-
ցան , և սկսան հարուստ զարդերով զարդարուիլ ,
երբ «դէան օրէնքը» ՅԱՍՏԱՆԻ հրատարակուե-
լով հասարակապետութեան վտանգի մը ժամա-
նակ , զանոնք ստիպեց նոյնի ժամանակաց պէս
անպաճոյճ զգեստուիլ : Ասան զի խափա արգիլուե-
ցաւ որ իրենց զարդարանքներուն մէջ կէս ունիկէ
աւելի ոսկի չգտնուի , այլ և այլ գոյներով ըզ-
գեստներ չհագնին , և կառքով քաղքին մէջ չար-
տրտին : Սակայն երբոր պարագաները ալէկի փո-
խուեցան , այս օրէնքը անզգալի կերպով կամաց
կամաց մոռցուեցաւ , մինչև որ ՅՅՏԻՆ բոլորովին
վերցուեցաւ : Անկէ ետքը կանանց զեղևութիւնն
երթալով աւելցաւ . և երբ Հռոմայեցիք Ասիա
մտան , ալ անկէ ետքը ոչ չափ ոչ սահման ունե-
ցաւ :

Մեծ զարմէ կնիկ մը հասարակաց տեղ մը երևան
ելլելու կ'ամբշնայ՝ թէ որ վերէն 'ի վար մարգրիտ-
ներով , ոսկով և ակունքներով զարդարուած չըլ-
լայ : Բայց թէ որչափ խնամք կը տանի գլուխն
զարդարանքին համար , դժուարին է բացատրելը :
Նախ պէտք է մտերմ դտուած ջրերով լուացուին ,
որպէս զի աւելի կենդանի գոյն մը առնուին . ետ-
քէն աղնիւ և հոտաւէտ ոգիքներով կ'օծէ զա-
նոնք , ոսկիէ ցանցակերպ վարսակալի մը մէջ կ'առ-
նէ , և վայելչապէս ուռեցընելով՝ ծիրանեգոյն
երիզներով կամ գեղայարմար շլթաներով կը հաս-
տատէ , և կամ պարզ ոսկիէ երկայն գնդաձեղով
մը բռնել կու տայ զանոնք : Երբեմն ալ՝ որպէս զի
երկանը միտքը այնպիսի գաղափարներ ձգէ՝ որ
միշտ կ'ախորժի , սաղաւարտի ձևով կը շտկէ իր
մտղերը : Բայց թէ որ բնութիւնը կամ դիպուածը
իր գլուխը այս ամենէն գեղեցիկ զարդէն ջրկէ ,
ճարտար հնարքներով այս պակասութեան անդը
կը լեցնէ : Այն աստիճանի հասած են այս հը-
նարքները , որ շատ անգամ Հնդկաստանի փղոս-
կըր իրեն բերնին առջի կենդանութիւնը կու տայ :
Ուրիշ անհամար միջոցներ ալ 'ի գործ կը գնեն
կանայք իրենց պակասութիւններն ուղղելու , կամ
գեղեցկութիւնը դուրս ցատքեցընելու :

Գլխու զարդարանքէն ետքը , կօշիկն աւելի իը-
նամբ կը տանին Հռոմայեցի տիկնայք : Իրենց կօ-
շիկը նման է երիկ մարդկանց կօշիկն , միայն թէ
աւելի աղուոր և աւելի թեթեւ է . սովորաբար
ճերմակագոյն է և մերթ ալ ծիրանեգոյն , քիչ մը
դէպ 'ի վեր դարձած ծայրով , և մարգրտով ու
ոսկով ծածկուած :

Իրենց հագուստը , որ «դէան կ'ըսուի» , միշտ ծի-
րանեգոյն ներկած աղնիւ բուրգէ է , և եղբրը

ոսկիէ ծոպերով կը վերջանայ, որ ինչուան ոսքը կ'իջնան: Ստալին տակէն վտաւակ մը կը հագուին, որ նման է էրիկ մարդկանց հագածին, միայն թէ աւելի երկայն է և թւեր ունի՝ որ մինչև բուռը կ'իջնան: Երբ տիկին մը տնէն դուրս ելլելու կ'ըլլայ, բայց 'ի իր միւս զգեստներէն՝ լայն վերարկու մը կ'առնէ վրան, որ բաւական կամ նաև Բէլ-Բել-Կըսուրի՝ քողի նմանութիւն ունենալուն համար:

Սակայն ինչպէս կարենամ նկարագրել քեզի քառամանեակները, ապարանջանները, մատնիները, գինգերը, մորթը գեղեցկացնող սնդոյրները, արուեստական պիսակները, և հազարումէկ մանր մոշեր բաներ, որոնց անունները մարդուս մաքէն կ'եղին երբ ուզենայ զանոնք յիշել: Ինչպէս կարենամ ճշգիւ ստորագրել քեզի մազերը գանգրելու երկաթները, գնդասեղները, մկրատները, պողպատէ կամ յղկած պղնձէ հայլիները, միով բանի՝ այն ամէն բան որ Հռոմայեցիք իրենց լեզուովը կանայ աշխարհէ կանուանեն: Կանայք ալ այս կատակին փոխարէն ուրիշ կատակ մը ընել ուզելով էրիկ մարդկանց՝ կը զուրցեն որ մարդրիտ չունեցող կնիկ մը՝ բրաւորներ չունեցող հիւպատոսի մը կը նմանի: Եւ երբ իրենց էրիկները զիրենք յանգիմանեն չափազանց զարգասիրութեան համար, պատասխան կու տան՝ որ կրօնական պարտք մըն է Շնորհաց զոհ մատուցանելը: Խոհեմ մարդիկ մտածելով որ աւելի սաստիկ բարկութիւն մը ցուցնելով կրնան իրենք զիրենք աւելի դժբաղդ ընել, կամաւորապէս լուծութիւնը յանձն կ'առնուն:

Պարզ քաղաքացի կանայք՝ աւելի չափաւոր են իրենց հագուստին մէջ, որ կը բաղկանայ վտաւակէ մը, և տեսակ մը պատմութեան որ աւելի երկայն է քան զէրիկ մարդկանցը, լայն գօտով մը կուրծքէն վար սխմուած, առջևէն գոց, և բոլոր մարմնոյն չորս կողմը կը պատէ: Այլ թւեր զգեստին վերին կողմէն դուրս կ'ելլէ, իսկ ձախը պատմութեան վեր առնելով՝ գեղեցիկ ծալք մը կը ձևացունէ անոր վրայ:

Ո՛ր և իցէ աստիճանի կնիկ ըլլայ՝ սուգի ժամանակ ոչ ոսկի և ոչ ծիրանի կը տեսնուի իր զգեստուցը վրայ. այլ սև լայն պատմութեանով մը կը ծածկուի, որն որ Խիլիսի կ'ըսուի: Գուղարկաւորութեանց օրերը այս զգեստէն քանի մը հատ հագած կ'ըլլան վրայէ վրայ, զորոնք հետզհետէ իրենց երկանը կամ հօրը խարոյկին մէջ կը նետեն: Այս սովորութիւնս խիստ հին է. և տասներկու տասնամիակներուն օրինակը մէջ կը յիշուի ասիկայ, թոյլ տալով որ այսպիսի աւթից մէջ մինչև իրեք զգեստ կարենան կանայք այրել:

Սակայն այս ստորագրութիւնները թողլով, որոնք անտի հետաքրքրութիւն մը միայն հաճելու յարմար են, աւելի կ'ուզեմ նկարագրել քեզի Հռոմայեցի տիկնայքը իրենց տան վիճակին մէջ, ուր որ կը վայելէն այն սրտի ուրարութիւնն և այն պատիւը, զորն որ պարագայ ահա դուրսը կը փնտրեն: Այն օրն որ էրիկը նոր հարսը տունը կը բերէ, ամենուն առջև տանը բոլոր բանալիներն իրեն ձեռքը կը յանձնէ, 'ի բաց առեալ այն տեղւոյն բանալին՝ ուր որ գինին կը պահուի: Հռոմաւորսի օրէնք մը կ'արգելու յայտնապէս կանանց գինի խմելու. և հին հռոմայեցի մը՝ Եգնատիոս

Մեկեննիոս անուամբ, որ օր մը իր կնոջը վրան հասնելով այն միջոցին՝ որ անիկայ գինույ մեծ ամաններուն մէջէն գինի կը խմէր, մէկէն նոյն տեղը սպաննեց զան, երբոր դատաստանի կանչուեցաւ, Հռոմուլոսի այս օրէնքին պատճառաւ ազատ արձակուեցաւ¹. և թէպէտ այսպիսի օրէնք մը խիստ անգութ ըլլալով՝ գործադրութիւնը գրեթէ անհնարին է, 'ի վերայ այս ամենայնի գեռ կենդանի կը պահուին այն սկզբունքները՝ որոնց վրայ հիմնուած է: Անոր համար է որ երբ ծնողք մը իրենց աղջկանը այցելութեան կ'երթան, իրաւունք ունին բերանը համբուրելու, որպէս զի ապահով ըլլան որ գինի չէ խմած: Յայտնի կ'երևայ որ Հռոմայեցւոց օրէնսդիրը կանանց վրայ գինովութիւնը քրէական յանցանք մը սեպեր է. հապա ինչ պիտոյր ըսէր արգեօք՝ թէ որ տեսած ըլլար մեր խելացիոր Կլաւ Կանայ² զատուածաւ անարգելը, զորոնք պատուել ձևացնելով՝ անամթաքար ամէն անվայել բան կը գործեն: Յանցաւոր է Հռոմ իր խստութեան համար. իսկ Յունաստան՝ իր չափազանց ներողամտութեամբը:

Կանանց իրենք իրենց վրայ ունենալու յարգութեանը հետեանքին պատճառաւ է՝ որ արգելուած է իրենց հասարակաց տեղուանք էրիկ մարդկանց սեղանակից ըլլալու, այս յետնոց ուտելու կերպին համար՝ որ կոչուելի ժամանակ անկողիններու վրայ կը նստին: Սովորութեան խստութեանը կը համաձայնի նաև օրինաց խստութիւնը, որոնք անանկ անաչառութեամբ կը վարուին կանանց նկատմամբ՝ որ անոնց իրական վիճակին անօգուտ և անյարմար կ'երևայ: Ամէն հռոմայեցի կին ըստ ամենայնի իր երկանէն կախում ունի: Ամենայն իշխանութիւն երկանն է. իրեն կ'իյնայ անօրինել իրենց երկուքին ինչքերն ալ, իր որդւոցը խնամակալունքը կ'ընտրէ, ըստ իւր հաճոյցն աւանդ վիճակը կ'որոշէ, կտակաւ իրեն ինչքը որուն որ կ'ուզէ կը թողու, ուր ընդ հակառակն կնիկը չկրնար ոչ ժառանգ որոշել, և ոչ ալ մէկէ մը ժառանգ ընտրուիլ. միով բանի՝ էրիկները դարերով կրնային ըստ քմաց հարսանեաց կապը լուծանել, ուր կանայք ինչ և իցէ աւթով չէին կրնար անոնցմէ բաժնուիլ:

Այս կարգադրութիւններուն փոխարէն, զորոնք բռնութիւնը գրեթէ անկարելի է վրայ, պատուաւոր և միանգամայն հաճոյական առանձնաշնորհութիւններ տրուած են կանանց: Արգելուած է քաղաքացի կնիկան մը առջին անպարկեշտ բառ մը զուրցել. և Հռոմայեցւոց զգուշաւորութիւնն այն աստիճանի հասած է, որ կարգուած մարդ մը ոչ երբեք իր աղջկանն առջև կը համբուրէ իր ամուսինը: Երբ կնիկ մը իրեք մանչ

1 Պլինիոս, Գիրք ԺԴ, գլ. ԺԳ: Կը պատմէ դարձեալ նոյն հեղինակը՝ թէ անգամ մը կնիկ մը այս ըսած բանալին գողցած ըլլալով, իրեն ծնողացմէն անթուութեամբ մեռնելու դատապարտուեցաւ:

2 Մակեալ Կանայ՝ կ'ըսուէին Յունաց մէջ Բաքոսի քրմուհիները, որոնք սպանդարամետական տօնից միջոցը յիմարական կատաղութեամբ մը կը բորբոքէին:

զաւակ ունենայ, հասարակապետութենէն եկա-
մուտ մը կ'ընդունի. իր անունը հասարակաց ար-
ձանագրութիւններուն մէջ կը գրուի, և մահու-
նէն ետքը փառաւոր հազուադէպով գերեզման
կը յուղարկուի, և ատենարան մը ժողոված
բազմութեանն առջին անոր վրայօք գովասանք մը
կ'արտասանէ¹: Երբ էրիկ մարդ մը հասարակաց
տեղ կ'ընի մը տեսնէ, պատուաւոր տեղը անոր կու-
տայ. և այս բանս ի գործ կը դնեն նաև առաջին
կարգի ատենակալներն ալ՝ նոյն իսկ իրենց պաշ-
տօնը կատարելու միջոցին: Ամենևին յիշատակու-
թիւն չկայ որ բրաւորք քաղաքացի կ'ընէ մը բռնած
ըլլան երբէք: Եթէ էրիկ մը էրկանն հետ կառք
նստած ըլլայ, էրիկը անոր առանձնաշնորհու-
թեանցը մասնակից կ'ըլլայ, և Պետութեան մեծ ա-
մենները չեն կրնար պահանջել իրմէն որ կառքէն
իջնէ զիրենք պատուելու համար: Կանայք գար-
ձեալ չեն կրնար մարդասպանութեան կամ ուրիշ
քրէական յանցանաց համար իբրև վկայ դատաս-
տանի կանչուիլ: Սակայն Հռոմայեցւոց առ կա-
նայս ունեցած յարգութիւնը՝ գլխաւորապէս վէս-
տեան կուսանաց ժողովքին վրայ կ'երևայ, ուսկից
կ'իմացուի նաև իրենց առ դիւ ունեցած պաշտօ-
նատիրութիւնը:

ԹՈՒՂԹ ԺԲ.

Պոդիկտետ առ Կրաստոր:

Օրինադրոշիւն Հռոմայ: Պատրիկք. — Աս-
պետք. — Ռամիկք. — Հարիւրոց խումբք.
— Դասք. — Յեղք:

Հռոմայեցւոց առօրեայ սովորութիւնները նկա-
րագրելէս առաջ, հարկ է որ նախ ճանչցնեմ
քեզի անոնց կառավարութեանն ոգին: Թէպէտ
այսպիսի նիւթ մը մեծ գծարարութիւններ ունի,
սակայն հանգերձ այսու կ'ուզեմ քեզի համառօտ
տեղեկութիւն մը տալ, որ որչափ ալ անկատար ե-
րևայ քեզի, ի վերայ այս ամենայնի մեծ աշխա-
տանաց և քննութեանց արգասիք է: Քննած պատ-
մագիրներս ինծի տարակուսական ծանօթութիւն
ներ տուին. ինչու որ բաց ի իրարու հակառակ
վկայելէն, շատ անգամ իրենք իրենց ըսածին վրայ
հաստատ չեն կենար: Որովհետև իրենց հայրե-
նակցաց համար միայն կը գրեն, կ'ենթադրեն թէ
ընթերցողք ծանօթ են Հռոմայ հիմնական օրէնք-
ներուն, որով անոնց բանին միայն չհասկցուիր՝
բայց եթէ սաստիկ աշխատութեամբ: Վստահ եմ
էս որ գու քու իմաստութեամբք տուած տեղե-
կութեանս թերութիւնները կը լեցնես, իմ սա-
կաւ խօսքերէս կ'ըմբռնես այն հիմունքը՝ որոնց
վրայ կը յենու այս ահաւոր շէնքը, և օրնթաց

1 Կեսար առաջինն եղաւ որ հասարակաց առ-
ջին գովեստ խօսեցաւ իր Վուռնեշիա կնկանը վրայ,
որ էր գուսար Կիննայի, և որ առանց զաւակի մե-
ռաւ: Մինչև նոյն օրը այսպիսի պատիւ մը՝ միայն
ընտանեաց մայր եղող կանանց տրուած էր:

աչքով մը դէպ ի ապագայ դարերը սահելով՝ կ'ո-
րոշես անոր տեղութեան վախճանին ժամանակը:
Հռոմէական հասարակապետութիւնն էապէս
կը տարբերի մերինէն, այն զանազանութիւննե-
րովն որով կը տարբերին քաղաքացւոց իւրաքան-
չիւր դասերը, և իրենց իրաւունքները գործադրե-
լու կերպովը: Աթէնք և Յունաստանի ուրիշ շատ
Պետութեանց մէջ, միապետութեան իյնալէն ետ-
քը, ժողովուրդը իր ամէն իրաւունքը գործածե-
լով՝ գերագոյն իշխանութիւնը ձեռքն առաւ: Ի-
րաւ հին տոհմերն՝ իրենց հարստութեամբն ու
կարողութեամբն մեծ իշխանութիւն մը ունեցան
միշտ Պետութեան մէջ, սակայն աւելի գործով
քան թէ իրաւամբք. և օրինական հաւասարու-
թեամբ ամենէն աղքատ քաղաքացիին ալ անոնց
աստիճանն եղաւ: Սակայն ի Հռոմ բանը բոլորո-
վին տարբեր գնաց: Տարկութիւնեանց աքսորուելէն
ետքը՝ կառավարութիւնը բոլորովին ժողովրդա-
կան չեղաւ. արքայական իշխանութիւնը աւելի
ջախջախեցաւ քան թէ կործանեցաւ, և իր կոտ-
րուանքը երկայն ատեն մէկ քանի տոհմից մէջ մնա-
ցին, որոնց ունեցած արտօնութիւններովը մտա-
ցածին բան մը եղաւ այն քաղաքական հաւասար-
ութիւնը՝ զորն որ ժողովուրդը ստացած կը կար-
ծէր: Թագաւորաց հնարած բոլոր կարգադրու-
թիւնները քաղաքացիքը բաժնելու ու անոնց ուժը
տկարացնելու վախճանաւ, ամենայն խնամքով
պահուեցան: Ժողովուրդը կամաց կամաց իր ան-
ձնական զօրութեան չափն զգալով, բարձրագոյն
կարգի դասերուն վրայ յարձակեցաւ, և անխնայ
կռուով պատերազմեցաւ անոնց հետ, մինչև որ
հետզհետէ անոնց ամենէն աւելի էական արտօ-
նութիւնները յափշտակեց. և առանց իրեն նախ-
նեաց դրած կարգը դրսուանց փոխելու ու առանց
տիտղոսի՝ իշխանութիւնը ձեռք առաւ:

Հռոմուլոս որ իր հաւաքած մարդիկներուն ա-
ռաջին օրէնքները դրաւ, երկու դաս զիրենք բաժ-
նեց, ծերակոյտ և ժողովուրդ: Ծերակոյտը կազ-
մեց այնպիսի մարդիկներէ, որ նշանաւոր էին տա-
րիքով (ինչպէս որ իրենց տիտղոսէն ալ կը հասկը-
ցուի), խելքով և ճոխութեամբ: Ասոնք էին թա-
գաւորին խորհրդականները, և իրեն տեղը կը բռն-
նէին՝ երբ ինքը պատերազմի երթալով հեռանար
աթոռէն: Այս ժողովքին իշխանութիւնը, որ
թագաւորաց իշխանութեան միջոցը չափաւորուե-
ցաւ, վերջի աստիճանի զօրացաւ հասարակապե-
տութեան հաստատուելովը: Այն ատեն ժողո-
վուրդը տէրութեան գործողութեանց մէջ մաս
չունեցաւ, և ծերակոյտին վճիռներովը միայն կը
ծանօթանար անոնց: Եւ թէպէտ այն ժամանա-
կէն ի վեր իրեն կ'իյնար օրէնք հաստատելը, ա-
տենակալներ որոշելը, խաղաղութիւն կամ պա-
տերազմ վճռելը, ի վերայ այս ամենայնի իր այս
իրաւանց գործադրութեանը մէջ ծերակոյտին
կամքովը կը շարժէր: Եւ ապետեան հաստատուե-
լովը, որ արքայական իշխանութեան կործանելէն
տասնըվեց տարի ետքն եղաւ, ծերակոյտին իշխա-
նութեանը չափ մը գրուեցաւ. և շատ զգնաց ժո-
ղովրդեան վճիռները յաղթեցին ծերակոյտին վը-
ճիռներուն: Սակայն դեռ ծերակոյտը շատ ա-
ռանձնաշնորհութիւններ ունի. ինչու որ Պետու-
թեան ելեմանց հաշիւը իրեն կը տրուի, ինքը միայն
օտար թագաւորաց և ժողովրդոց դեսպաններ կը

խրկէ, գաւառաց վրայ կարգադրութիւններ կ'ընէ, զորավարաց խրկած տեղեկութիւնները կ'ընդունի, անոնց համար ըլլուելու յաղթական հանգէսները կը սահմանէ, հիւպատոսներուն կը հրամայէ վտանգի ժամանակ զօրք ժողվելու, և ամէն արտաքոյ կարգի գատերու գատաւորները ինքը կ'անուանէ: Սոյն այս ծերակոյտը իր հաստատուելէն 'ի վեր հռոմայ գաբիրայն սեպուած է, և նոյն իսկ ամենէն սառտիկ նախանձոտներէն յարգուած: Ժողովուրդը սովոր է զան կոչելու տաճար սրբութեան, բագին ազգաց, յոյս և ապական ամենայն ազանց: 'Եղնալէս ծերակոյտին անդամներուն հարկ անուշը կու տայ, իսկ օտարականք Տէրէ կ'անուանեն զանոնք:

Կը շարունակուի:

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Բանտը:

Ընէ դարձո գամ մի զաչս 'ի տխրազգած որմունսն, յորում մարդոյս ազատութիւն 'ի ծանրաբեւն յերկաթս կաշկանդեալ, յորում անմեղութիւն է երբէք զի խառնակի ընդ եղեռան, յորում և յառաջ քան զվերջինն ընդ ամենայն անցանէն պատիժս պատուհասից. մատիր, և թէ երբէք չլթայիցն խռով ահաւոր, եթէ խաւարն ահարկու, և հեծութիւնք խուլ և խորին՝ ոչ զսիրտ քո պաղեալ սառուցանեն կամ յետս զքեզ թէ ոչ սոսկումն վարեցէ, մնտ 'ի ցաւոց օթեանս նոցա, պնդեա զքեզ առ սուղ ինչ վայրկեան իջանել յայն սեաւ զնդան զոր չէտես երբէք լոյս արփենալոյ, և յայն խաթարեալ կերպարանս՝ ծանիր զպատկերակիցսդ, 'ի շղթայիցն ճմլեալք, 'ի ծուէնս ինչ զկէս մարմնոյն ծածկեալ, ժահահոտք յանփոփոխ օդոյն և թուին զթոյն եղերանն կլանել, և որդանցն, որ զգէշս 'ի գերեզմանի սպառեն, կեր լնին կենդանոյն. սակաւիկ ինչ և անախորժ պաշտի նոցա կերակուր. պակնուն սրտաբեկ 'ի նմանավիշտ ընկերացն աղիտից և 'ի սպառնալեաց անազորոյն պահապանին. ակնկալութիւն զնոսա ահաբեկէ մանաւանդ քան երկիւղ պատուհասիցն. այսպէս մշտատանջ զմահ կո-

չեն ինքեանց ձեռնառու, զբաղցրագոյնն քան զայն կեանս ողորմելի:

Ուէ են արքդ եղեռնաւոր, սակայն և այնպէս գթութեան են արժանիք, և դատաւոր անարդար է դանդաղեալն 'ի գատել զնոսա: Պատուհաս կապեցին օրէնք 'ի վրէժ յանցանաց և 'ի հատուցումն ազգի մարդկան. այլ դժնդակ բանտին տանջանացն երկարութիւն ծանրաբեւնէ կրկին զաղէտս յանցաւորին, և եղծանին օրէնք՝ եթէ ըստ չափ անցանէն. անիրաւութիւն մեծեղեռն առ յանցաւորն և առ մարդկութիւն միանգամայն, թող զի մէն մի վայրկեանք 'ի բանտի անդ ծախեալք կորնչին անպէտք յօրինակ բարուց:

Եւ անմեղ թէ արքդ իցեն, ո՛վ ցաւք, ո՛վ գորովք, մարդկութիւն առ այս կոծ ահաւոր և աղէկէզ ամբառնայ 'ի խորոց սրտէ. Եւ իմէ մարդ յազատուի ծնեալ ընդ բեռամբ հեծէ շղթայից. հազիւ 'ի բանտ խաւարչտին շնչէ պոյն՝ ում երկինք պարգևեցին զօդ և զլոյս եթերին, քարշեալ բռնի 'ի գրկաց ամուսնոյն և որդւոց հայրն տանուտէր: Տաւք, անյուսութիւն և քաղց պատեն զանդորր բնակութեամբ նորա. ձեռքն այն՝ որով զսիրելեալն փարէր և ընդգրկէր զլոյսն դեռածին, ձեռքն՝ որ զկեանս նոցա հայթհայթէր, որ սերմանէրն և հնձէր, ձեռքն այնոքիկ առ աշխարհն պիտանիք, 'ի շղթայս կան պարաւանդք յանիրաւի. այն սիրտ անարատ և անստգիւտ դնի 'ի վայր պղծեալ 'ի խղճէ մտաց. համառօտ՝ անմեղութիւն հեծէ յօթեանս եղերանց: Եւնդ՝ զկենաց մարդկան նա ինքն լայ ողորմագին զթշուառ պայման. անդ՝ յառեալ զաչս 'ի Վախախնամութիւնն վերին, արձակէ դառն հառաչանս. Օբաղդ քոյին, ո՛վ մարդ, թէ գիտիցէս. վիշտք և մահ, սոքին են քոյոյ կենացդ ասպարիզի թիրախք կրկին մեծամեծ:

ՍԵՐՎԱՆ